

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի)

# ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՏԵՍԻԼՔԸ

Կես գիշեր էր...:
Լո՛ւռ՝ ապարանքն արքունի:
Իշխանքն հայոց պալատին,
Խոր քունի մեջ երազի,
Օրվան խոնջենքը կառնեն:

Անկայծ ճրագ մը վերեն
Կը բոցկլտա մեղմորեն:
Հոգի մը լուռ, միշտ արթուն,
Իր խոհանքին մեջ ծըփուն,
Խորն իր սրտին վառ պահած՝
Ճրագն հույսին Հիսուսի
Կը հսկե...:
Ու կը տեսնե, որ երկինք
Ակոս-ակոս կը պատռի.
Լույսի խուրձեր,
Լույսի շողեր
Ամպերն համակ կողողեն:

***

Կը բացվի դուռն հրեղեն,
Լույսը լույսեն մարմնացած՝
Կիջնե հանդարտ ու խաղաղ,
Ձեռքին ոսկի,
Ձեռքին ուռնակ
Լուսապըսակ:

Հարվածին տակ Իր մուրճին՝
Սանդարամետք կը սարսին...:

Մեծ հսկողը գիշերվան՝
Կը թաղվի մեջ խորհրդին
Աստվածային հրաշքին:

Ճըպիռն աչքին սրբելով,
Արթուն հոգվով ու մտքով,
Աչքը հառած երկինքին՝
Կը նայի մեծ երազին...:

***

Տեսիլքն այդ սուրբ գիշերվան
Խըռովք դարձած իր հոգվույն՝
Աչքերն ի վայր կը դարձնե:
Ու կը տեսնե ան հստակ՝
Չորս խարիսխնե՛րը նետված
Իրարմե ոչ շատ հեռու:
Չորս մեծ սյուներ հրեղեն՝
Խարիսխներեն դեպ՝ երկինք
Դարձած լույսի աշտանակ,
Կապած ամպե խոյակներ՝
Կամար-կամար ագուցված:
Խաչերն վըրան խոյակին,
Խաչերը սուրբ լույսերու,
Միաձան են իրարու:

Կը կամարվի տեսիլքն այդ,
Կըլլա գմբեթ մը լույսի,
Կը բարձրանա դեպի վեր,
Երկինքներեն ալ շատ վեր,
Եվ պատվանդան կը դառնա
Լույս Աթոռին Աստուծո...:

Ծունկի կիյնա ծերունին,
Աչքերն հառած երկնքին,
Ու թևերն իր լայն բացած,
Կը մրմնջե առ Աստված.

«Լույսի ստեղծիչ Արարիչ,
Խոր գիշերվան այս մութին՝
Կը պարզեես Դուն մեզի
Երազին ձևն՝ դարերու
Խարիսխ մեր սուրբ հավատքին
Լուսո Խորան Էջմիածնին...: